ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ «ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՊՐՈԲԱՑԻԱՅԻՆ» ԱԶԳԱՅԻՆ ՑԱՆՑԻ

ԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների «Աջակցություն պրոբացիային» ազգային ցանցը (այսուհետ՝ Ցանց), ի դեմս Ցանցի կառավարման խորհրդի նախագահ Արտակ Կիրակոսյանի, և ՀՀ ԱՆ Պրոբացիայի ծառայությունը (այսուհետ՝ Պրոբացիայի ծառայություն), ի դեմս Պրոբացիայի ծառայության պետ Ա. Նավասարդյանի, (այսուհետ՝ Կողմեր),

նկատի ունենալով, որ ՀՀ Պրոբացիայի մասին օրենքի համաձայն պրոբացիայի ծառայության գործունեությունը հիմնված է հասարակական և այլ կազմակերպությունների հետ համագործակցության վրա, իսկ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների «Աջակցություն պրոբացիային» ազգային ցանցն աշխատում է խոցելի և օրենքի հետ խնդիրներ ունեցող խմբերի հետ,

նպատակ ունենալով նպաստել Հայաստանում պրոբացիայի ոլորտի բարեփոխումների իրականացմանը՝ անհրաժեշտ աջակցության ցուցաբերման, հանրային վերահսկողության իրականացման, ՔՀԿ-ների ներուժի համախմբման և կարողությունների զարգացման միջոցով խթանել և ընդլայնել պրոբացիայի շահառուների՝ վերականգնողական ծառայություններ ստանալու և վերասոցիալականացում ապահովելու հնարավորությունները, կնքեցին սույն Հուշագիրը հետևյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը համատեղում են կարողությունները և ջանքերը մարդու իրավունքների պաշտպանության և վերականգնողական արդարադատության զարգացման ոլորտներում՝ նպատակ ունենալով համատեղ ծրագրերի իրականացման միջոցով հասնել հանրային վերահսկողության իրականացմանը և օրենսդրական բարեփոխումների:

Ցանցի անդամները և Ցանցի հիման վրա ստեղծված դիտորդական մարմինները գործում են ՀՀ Սահմանադրության, ՀՀ օրենսդրության, ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերի, Ցանցի կանոնադրության և էթիկայի կանոններ հիման վրա՝ առաջնորդվելով համագործակցության և գաղտնիության սկզբունքներով:

Ցանցն իր գործունեության ընթացքում պետք է զերծ մնա պրոբացիայի շահառուների հանդեպ նախապաշարմունքային վերաբերմունքից՝ ազգային, ռասայական, կրոնական, սեռական, տարիքային, ֆիզիկական և/կամ մտավոր արատների, սոցիալական կարգավիճակի և այլ հիմքերով:

Ցանցի ներկայացուցիչները պարտավոր են.

ա) հավատարիմ լինել մարդու իրավունքների հիմնարար արժեքներին, մասնավորապես հարգել անձի՝ մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը, այդ թվում՝ նամակագրության, անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիության, բնակարանի և այլ սեփականության անձեռնմխելիության սկզբունքները,

բ) հավատարիմ լինել անմեղության կանխավարկածի սկզբունքին, արդար դատաքննության իրավունքի պահպանմանը,

գ) առանձնահատուկ նրբանկատություն դրսևորել, եթե տեղեկատվության աղբյուրները և/կամ շահառուներն անչափահասներ են,

դ) չչարաշահել անձանց դյուրահավատությունը և վստահությունը:

Ցանցը և Ցանցի հիման վրա ստեղծված դիտորդական մարմիններն իրենց պարտականությունները կատարելիս՝ կարող են շահառուների վերաբերյալ և նրանց անձնական կյանքին վերաբերող տեղեկություններ ստանալ, որոնք պարտավորվում են որևէ պարագայում չբացահայտել երրորդ անձանց: Ցանցը և Ցանցի հիման վրա ստեղծված դիտորդական մարմնի անդամների գործունեության արդյունքում ստացված անձնական բնույթի տվյալները կարող են հրապարակվել բացառապես շահառուի համաձայնությամբ:

Պրոբացիայի ծառայությունն աջակցում է Ցանցին հանրային վերահսկողության իրականացման և կազմակերպման հարցում:

Պրոբացիայի ծառայությունը խրախուսում է Ցանցի ներգրավվածությունը հանցագործությունների կանխարգելման, իրավախախտների վերասոցիալականացման և վերականգնման աշխատանքներում:

Համագործակցության նպատակով Կողմերը կարող են իրականացնել համատեղ ծրագրեր:

ՀՈԴՎԱԾ 2

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հուշագիրն, ինքնին, Կողմերից որևէ մեկի համար չի առաջացնում ֆինանսական բնույթի որևէ պարտավորություն:

ՀՈԴՎԱԾ 3

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն հուշագրի պայմաններում ցանկացած փոփոխության մասին կողմերը պարտավորվում են գրավոր տեղեկացնել միմյանց՝ փաստացի փոփոխությունից ոչ ուշ, քան տասնչորս (14) օր առաջ:

Հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի լիազորված ներկայացուցիչների կողմից ստորագրման պահից և գործում է մեկ տարի ժամկետով՝ երկարացման հնարավորությամբ:

Հուշագրի գործողությունը կարող է դադարեցվել փոխադարձ համաձայնությամբ կամ Կողմերից մեկի նախաձեռնությամբ՝ գրավոր ծանուցելով մյուս Կողմին ոչ ուշ, քան տասնչորս (14) օր առաջ:

ՀՀ Արդարադատության Նախարարության Պրոբացիայի ծառայության պետ՝

Ա. Նավասարդյան

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների «Աջակցություն պրոբացիային» ազգային ցանցի կառավարման խորհրդի նախագահ՝

Ա. Կիրակոսյան